ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ N 1

Ի պատասխան № **SILD-AFG-23 «ՀՀ Արարատի մարզի Արտաշատ, Մասիս, Արարատ, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր, ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքների համար 16 հատ աղբատար մեքենաների գնում /բաղկացած 6 լոտից/»** մրցույթի վերաբերյալ 29.09.2023թ. Armeps համակարգով ստացված հարցմանը ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումը.

Հարց N 1՝

Հարգելի Գործընկեր, կարող եք տալ պարզաբանում հետևյալի մասին.

պահանջվող տեխնիկական մասնագրերում տվյալներ չկան բեռնատարների վազքի վերաբերյալ, այնինչ արտադրման վայրից մինչև ներմուծման երկիր բեռնատարների փոխադրման ժամանակ հնարավոր է բեռնատարն ունենա որոշակի վազք, առավելագույնը որքան կմ վազքն է Ձեր համար ընդունելի կամ թույլատրելի։ Կանխավ շնորհակալություն։

Պատասխան N 1՝

Հարգելի Գործընկեր,

Մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի փաստաթուղթ, որը վկայում է որ SILD-AFG-23 մրցույթով նախատեսված աղբատար մեքենաները արտադրվել են 2023թ-ին և շահագործված չեն։ Գործարանից մինչև մատակարարման վայր ճանապարհատվածի վազքն ընդունելի է, սակայն հետագայում այն կնվազեցվի և հաշվի չի առնվի մատակարումից հետո՝ մատակարարի երաշխիքային պարտավորությունների կատարման ժամանակ։

Հարգանքով,
Ռոզա Դանիելյան
№ SILD-AFG-23 մրցույթի քարտուղար
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
04.10.2023թ.